ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը N 148-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2019.03.20/20(1473) Հոդ.199
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Կավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 21.03.2019

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 21.02.2019
Ստորագրման ամսաթիվը 07.03.2019
Կավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

⊞ Կապեր այլ փաստաթղթերի հետ
⊞ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ, ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2019 թվականի N 148-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական գործով՝ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտային հանքի շահագործման նպատակով կազմված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման հաշվետվությունների փորձաքննման, ինչպես նաև հանքավայրի շահագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցության ռիսկերը պարզելու համար, քրեական գործով նշանակված էկոլոգիական, երկրաբանական, հիդրոլոգիական, երկրաֆիզիկական, նյութագիտական, հողագիտական, քիմիական, տեխնոլոգիական, շինարարատեխնիկական և տնտեսագիտական համալիր փորձաքննության կատարման համար Earth link & Advanced Resources Development (ELARD) միջազգային հավատարմագրված ընկերության հետ պայմանագիր կնքելու և հետագա գործընթացները կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կառավարչական ծառայություններ» հոդվածով) Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին 2019 թվականի առաջին եռամսյակում հատկացնել 396900 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (ներառյալ հարկերը)՝ Earth link & Advanced Resources Development (ELARD) միջազգային հավատարմագրված ընկերության հետ պայմանագիր կնքելու և հետագա գործընթացները կազմակերպելու նպատակով:

2. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

2019 թ. մարտի 7
Երևան

178 Արգար.

ELARD

ERALD
Earth Link and Advanced Resources Development S.A.L.
Member of ELARD Holding S.A.L.

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Մամիկոնյանց 46/5
Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ./ֆաքս՝ 00374 11 880023

Մարտի 22, 2019թ.
Ֆայլի համարը՝ 1874-ICA-2019

Թեման՝ Հաշիվ-ապրանքագիր

Նախագիծ՝ Երրորդ կողմի կողմից Ամուլսարի ոսկեբեր կվարցիտային հանքավայրի՝ ջրային պաշարների, երկրաբանության, կենսաբազմազանության և օդի որակի վրա ունեցած ազդեցության անկախ փորձագիտական գնահատում

Հարգելի պարոնայք,

Խնդրում եմ կից ծանոթանալ հաշիվ-ապրանքագրի հետ, որը կազմում է //~~77,792.60~~ ԱՄՆ դոլար//(~~յոթանասունյոթ հազար յոթ հարյուր իննսուներկու ԱՄՆ դոլար և վաթսուն ցենտ~~) 62,234.00 (վաթսուներկու հազար երկու հարյուր երեսունչորս ԱՄՆ դոլար զրո ցենտ), որը ծածկում է վերոհիշյալ նախագծի կանխավճարը: *(Signed and sealed by ERALD SAL)*

Վճարման համար խնդրում եմ ընտրել ստորև նշված բանկային տվյալներից (ԱՄՆ դոլար) որևէ մեկը.

Բանկի անվանումը՝ Bank Audi, Dora Branch, +961 1 255686
Հաշվետերը՝ Account holder: Earth Link and Advanced Resources Development sal
Տարադրամ՝ ԱՄՆ դոլար (USD)
Հաշվեհամար՝ 372890 461 002 005 42
IBAN: LB34 0056 0003 7289 0461 0020 0542
SWIFT No: AUDBL BBX
կամ

✓Բանկի անվանումը՝ SARADAR BANK, Sin el Fil Branch, +961 1 500830
Հաշվետերը՝ Account holder: Earth Link and Advanced Resources Development sal
Տարադրամ՝ ԱՄՆ դոլար (USD)
Հաշվեհամար՝ 01 1318117 003 840
✓IBAN: LB570048000000113181170038 40
✓SWIFT No: BTLVBBEXXXX

ERALD SAL
(Signed and sealed)
Թոնի Սլեյման

Կորպորատիվ ֆինանսների գծով մասնագետ

Թարգմանիչ Ց.Պողոսյան

SARADARBANK

Բեյրութ, մարտի 21, 2019թ.

Ում՝ ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Մամիկոնյանց 46/5
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հարգելի պարոնայք,

Հղում՝ 2019թ մարտի 11-ին կնքված պայմանագրի №MD 1907937358/7296 կանխավճարի երաշխիքը Երրորդ կողմի կողմից իրականացված Ամուլսարի ոսկեբեր կվարցիտային հանքավայրի՝ ջրային պաշարների, երկրաբանության, կենսաբազմազանության և օդի որակի վրա ունեցած ազդեցության անկախ գնահատում իրականացնելու համար

Երրորդ կողմի կողմից Ամուլսարի ոսկեբեր կվարցիտային հանքավայրի՝ ջրային պաշարների, երկրաբանության, կենսաբազմազանության և օդի որակի վրա ունեցած ազդեցության անկախ փորձագիտական գնահատման ծառայություններ մատուցելու համար ՀՀ քննչական կոմիտեի և "Earth Link and Advanced Resources Development S.A.L." (ERALD) (այսուհետ՝ Խորհրդատու) ընկերության միջև 2019թ մարտի 11-ին կնքված պայմանագրի 4.3 դրույթի համաձայն:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն պարտավորվում է Խորհրդատուին վճարել Պայմանագրի արժեքի 20%-ը որպես կանխավճար, որը կազմում է 77,792.60 (յոթանասունյոթ հազար յոթ հարյուր իննսուներկու ԱՄՆ դոլար և վաթսուն ցենտ): Նշված կանխավճարը պետք է վճարվի Խորհրդատուի՝ Saradar Bank SAL:LB57004800000011318117003840 բանկային հաշվին:

Մենք՝ SARADAR BANK S.A.L բանկը (գրասենյակը գրանցված է հետևյալ հասցեում՝ Ashrafieh, Charles Malek Avenue, Saradar Bldg, Beirut-Lebanon) սույնով առանց պայմանների և անվերապահորեն երաշխավորում ենք, որ Խորհրդատուի հետ ինչպես համատեղ, այնպես էլ առանձին, ոչ միայն որպես պարտատեր, այլ նաև որպես վստահված անձ, պարտավորվում ենք առաջին իսկ պահանջի դեպքում ՀՀ Քննչական կոմիտեին վճարել մինչև $77,792.60 ԱՄՆ դոլար կազմող ցանկացած գումար (յոթանասունյոթ հազար յոթ հարյուր իննսուներկու ԱՄՆ դոլար և վաթսուն ցենտ), եթե ՀՀ քննչական կոմիտեն կգա համատեղ այն եզրակացության, որ Խորհրդատուն չի կատարել իր պայմանագրային պարտականությունները:

Խորհրդատուի կողմից պայմանագրային պարտականությունները չկատարելու մասին գրության մեկ օրինակ գրավոր ձևով փոխանցվելու է մեզ, մեկ օրինակ էլ՝ Խորհրդատուին:

Սույն երաշխիքն ուժի մեջ է մտնելու Խորհրդատուին կանխավճարը վճարելու օրվանից և վավերական է լինելու մինչև 2019թ դեկտեմբերի 31-ը կամ մինչև այն ամսաթիվը, երբ գումարը կվերադարձվի վերջնական փուլի հաշվետվության ստացման-ընդունման արձանագրության հիման վրա:

Սույն բանկային երաշխիքի համաձայն՝ “SARADAR BANK S.A.L”-ի կողմից վճարված ցանկացած գումար կնազեցնի երաշխիքային գումարը համապատասխան գումարի չափով:

SARADAR BANK S.A.L

(ստորագրված և կնքված է)

Կարլա Կ.Բոու Ասսաֆի կոմից և Լյուսետտ Ջ.Հադդադի կողմից

Թարգմանիչ Յ.Պողոսյան